

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 14

«Նորավանք» գիտակրթական
հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 2003 թ. օգոստոսի 19-ի նիստի

- Ա. Մարգարյան - ՀՀ վարչապետ, «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ
- Մ. Թովուզյան - ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար, «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամ
- Տ. Սարգսյան - ՀՀ կենտրոնական բանկի նախագահ, «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամ
- Լ. Մկրտչյան - ՀՀ ԱԺ պատգամավոր, «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամ
- Ա. Ավետիսյան - ՀՀ կրթության և գիտության նախարարի տեղակալ, «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամ
- Ռ. Շուգարյան - ՀՀ արտաքին գործերի նախարարի տեղակալ
- Մ. Լալայան - «Հանրապետական» կուսակցության խորհրդի անդամ
- Գ. Հարությունյան - «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի գործադիր տնօրեն
- Մ. Մկրտչյան - «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի տնօրենի տեղակալ
- Ս. Սեյրանյան - «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի տնօրենի տեղակալ
- Լ. Բաղրամյան - «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի քարտուղարության մասնագետ

«Նորավանք» գիտակրթական հիմնադրամի 2003թ. կատարված և նախատեսվող աշխատանքների, վարչական շենքի շինարարական վերանորոգման, ընթացիկ գործունեության հետ կապված հարցերի, այդ թվում՝ 2003թ. ծախսերի նախահաշվի, հաստիքացուցակի, վարչակառավարչական ծախսերի, գիտական աշխատանքների եռամսյա տեղեկատվական-վերլուծական պարբերական հանդեսի կանոնադրության հաստատման, հիմնադրամի բյուջեից ֆինանսավորում չենթադրող հատուկ ծրագրերի այդ թվում՝ «Մոլորակ» տեղեկատվական ծրագրի ստեղծման, «Հայոց պատմությունը համաշխարհային պատմության համատեքստում» ծրագրի համակարգչային տարբերակի ստեղծման, ինչպես նաև ANSEF կազմակերպությանը ներկայացրած դրամաշնորհային ծրագրերի, գործադիր

տնօրենի հետ պայմանագրի ժամկետը երկարաձգելու մասին

(Ս.Սեյրանյան, Մ.Մկրտչյան, Գ.Հարությունյան, Մ.Լալայան, Ռ.Շուգարյան, Ա.Ավետիսյան, Լ. Մկրտչյան, Մ.Թովուզյան, Տ.Սարգսյան, Ա.Սարգսյան)

Որոշեցին.

1. 2003թ. կատարված, ընթացքի մեջ գտնվող և նախատեսվող աշխատանքների մասին հանձնարարել «Նորավանք» գիտակրթական հիմնադրամին`

ա) մինչև 2003թ. տարեվերջ «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի հաստատմանը ներկայացնել «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի աշխատանքների արդյունավետությունը գնահատող չափորոշիչները,

բ) մեկշաբաթյա ժամկետում «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին ներկայացնել առաջարկություն այն պետական կազմակերպությունների և կառույցների ցանկի մասին, որոնց նպատակահարմար է տրամադրել «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի կողմից ստեղծված վերլուծական խմբերի վերլուծությունների և ուսումնասիրությունների արդյունքները,

գ) հավանություն տալ`

- նախատեսվող հիմնարար ուսումնասիրությունների ցանկին,
- «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի պարբերականի համար նախատեսված սեղմ գիտական ուսումնասիրությունների ցանկին` փոխելով Ս.Գրինյանի թեման,
- սոցիոլոգիական հետազոտությունների ծրագրին (թեմաները կցվում են սույն արձանագրությանը),
- հիմնադրամի ինտերնետային էջին,
- գրադարանի ստեղծմանը:

Հանձնարարել`

- «Հայագիտության զարգացման ռազմավարությունը միջազգային գիտական փոփոխվող միջավայրում» թեմայի գծով հայտարարել մրցույթ` ներառելով նաև ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտին,
- «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի «ՀՀ ներքին քաղաքական դաշտի մոնիթորինգի» վերլուծական խմբի աշխատանքներում ներառել «ՀՀ ներքին քաղաքական դաշտի գաղափարախոսական կառուցվածքի ուսումնասիրություն» թեման:

Սույն արձանագրությանը կցված սեղմ գիտական ուսումնասիրություններից 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ և 8-րդ ուսումնասիրությունների արդյունքները տրամադրել համապատասխան նախարարություններին:

2. Հավանություն տալ 2002թ. «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի կողմից «Հրազդան-6» ՓԲԸ-ի հետ կնքած պայմանագրով կատարված, ինչպես նաև 2002թ. կատարված մնացած շինարարական վերանորոգման աշխատանքներին և հանձնարարել «Նորավանք» գիտակրթական հիմնադրամին 2003թ. «Նորավանք»

գիտակրթական հիմնադրամի բյուջեի ֆինանսական հնարավորությունների շրջանակներում շարունակել շինարարական վերանորոգման աշխատանքները «Հրազդան-6» ՓԲԸ-ի հետ կնքելով պայմանագիր: Կատարել Գարեգին Նժդեհի 23 հասցեում գտնվող շենքի ջեռուցման համար նախատեսվող աշխատանքները:

3. «Նորավանք» գիտակրթական հիմնադրամին`

մինչև 2003թ. տարեվերջ հիմնադրամի կանոնադրության մեջ կատարել փոփոխություններ` այն համապատասխանեցնելով «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի պահանջներին,

4. «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի 2003թ. նախահաշիվը վերանայել` «աշխատավարձ և աշխատավարձի հետ կապված ծախսեր» հոդվածով նախատեսված գումարը համապատասխանեցնել «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի պահանջներին և հաստատել բյուջեն` ըստ ծախսային ուղղությունների հետևյալ տեսքով.

ա) կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսեր	48000,0 հազ. դրամ
բ) վարչակառավարչական ծախսեր	12000,0 հազ. դրամ
	<hr/>
ընդամենը`	60000,0 հազ. դրամ

5. «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի հաստիքացուցակը վերանայել այնպես, որ վարչակառավարչական աշխատողների աշխատավարձին ուղղվող միջոցների տարեկան մեծությունը չգերազանցի սույն արձանագրության 4-րդ կետում նշված մեծությանը, իսկ հաստիքների վերանայման արդյունքում հաստիքացուցակից դուրս մնացած անձանց հնարավորության սահմաններում ընդգրկել «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրերում` պայմանագրային հիմունքներով: Վերանայման արդյունքում հաստատել հետևյալ հաստիքները և աշխատանքների կատարման պայմանները.

ա) վարչակառավարչական հաստիքներ (որոնց աշխատավարձը ըստ «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 7-րդ և 9-րդ կետերով համարվում են վարչակառավարչական ծախսեր)

1. Գործադիր տնօրեն - 1 միավոր
2. Գործադիր տնօրենի տեղակալ - 2 միավոր
3. Խորհրդական - 1 միավոր
4. Գործերի կառավարիչ - 1 միավոր
5. Գլխավոր հաշվապահ - 1 միավոր

Ընդամենը` 6 (վեց) միավոր:

բ) կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերին վերագրվող աշխատանքներ իրականացնողներ (որոնց աշխատանքի դիմաց վճարումը ըստ «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 7-րդ և 8-րդ կետերի համարվում է կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսեր).

1. Հոգաբարձուների խորհրդի կողմից հավանության արժանացած և «Նորավանք» ԳԿՀ-ի կողմից կազմված ու հաստատված ծրագրերի

իրականացման հետ կապված աշխատողներ՝ պայմանագրային հիմունքներով:

2. «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի գույքի (շենքի, ավտոմեքենայի, տնտեսական գույքի և այլն) պահպանման գծով աշխատանք իրականացնողներ՝ պայմանագրային հիմունքներով («Նորավանք» ԳԿՀ-ի կողմից նպատակահարմար համարվող ժամկետներով):

1. պարետ – 1 միավոր
2. պահակ – 2 միավոր
3. հավաքարար – 1 միավոր
4. վարորդ - 1 միավոր
5. դռնապան – 1 միավոր

Ընդամենը՝ 6 (վեց) միավոր:

6. Հաստատել «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի գիտական աշխատանքների «21-րդ դար» տեղեկատվական-վերլուծական պարբերական հանդեսի կանոնադրությունը:

7. «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի բյուջեից ֆինանսավորում չենթադրող ծրագրերից ANSEF կազմակերպության հայտարարած մրցույթին մասնակցությունը ընդունել ի գիտություն, իսկ մնացած աշխատանքներին անդրադառնալ հետագայում:

8. Լիազորել «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամ, ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար Մանուկ Թովուզյանին՝ կնքելու «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի գործադիր տնօրեն Գագիկ Հարությունյանի հետ աշխատանքային պայմանագիրը երկարաձգելու մասին լրացուցիչ համաձայնագիր:

«Նորավանք» գիտակրթական
հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի նախագահ
ՀՀ վարչապետ՝

Ա. Մարգարյան

Հիմնարար ուսումնասիրությունների ցանկ

1. Աղասի Թադևոսյան «Արժեքային արդի գործընթացները և միտումները Հայաստանում»,
2. Արմեն Այվազյան «Հայագիտության զարգացման ռազմավարությունը միջազգային գիտական փոփոխվող միջավայրում»

**«Նորավանք» գիտակրթական հիմնադրամի պարբերականի
համար նախատեսված սեղմ գիտական ուսումնասիրությունների ցանկ**

1. Հայկ Դեմոյան «Ադրբեջան. հին թնջուկներ և նոր մարտահրավերներ»
2. Հակոբ Չաքրյան «Հայ-թուրքական հարաբերությունները տարածաշրջանի քաղաքական զարգացումների համատեքստում»
3. Դավիթ Հովհաննիսյան «Համաշխարհային աշխարհաքաղաքական միտումները և տարածաշրջանային քաղաքական զարգացումները»
4. Արա Մարջանյան «Էներգետիկա. Զարգացման գլոբալ և տարածաշրջանային միտումները»
5. Աշոտ Եղիազարյան «Կոմունիկացիոն համակարգեր և կոմունիկացիոն անվտանգություն»
6. Իգոր Մուրադյան «Տարածաշրջանային գեոէկոնոմիկա»
7. Իգոր Բաղիրյան «Իննովացիաները տնտեսության մեջ»
8. Ատոմ Մարգարյան «Երկրի մրցակցային ռազմավարությունը տնտեսական անվտանգության համատեքստում»
9. Ռուբեն Խուրշուդյան «Ներքաղաքական»
10. հպԲչպո թԲՌվկպՉ “Интернет как Супермозг: от гипотезы - к модели ”
11. Տեր Մեսրոպ քահանա Արամյան «Հայ ինքնությունը քրիստոնեական հավատքի մեջ»

Մոցիոլոգիական հետազոտությունների ծրագիր

1. Մամվել Մանուկյան «Հայաստանի ընտրախավերի տիպաբանական սանդղակավորում»

